



ՇՈՒՂԱՆԻԿ ԿՈՆՐՈՂԻՆՅԱՆ

Ին հայրենիք

1

Ես սիրում եմ այն ամենը, ինչ որ գեղեցիկ է, իսկ դու գեղեցիկների գեղեցիկն ես, իմ հայրենի՛ք:

Ես սիրում եմ այն ամենը, ինչ որ առաքինի է, իսկ դու տառապում ես առաքինությանդ համար, իմ հայրենի՛ք:

Տառապանքն եմ սիրում, ո՞վ է տառապել քեզ նման:

Միրում եմ տոկալ, ո՞վ է տոկացել քեզ նման:

Միրում եմ հուսալ . որքա՛ն համատ ես դու քո լավ օրերի հուսով:

2

Մի՞թե չկայի ես, երբ դու կայիր. ես ծնա քո գրկի մեջ և գոյությունս գոյությանդ մեջ անհայտ, աննշմար կապրեր:

Դու գիտե՞ս, թե առաջ ուր էր իմ հոգին, վե՞րը թե վարը, ամպերի մե՞ջ, թե ծաղիկներում: Ես քեզ մոտ էի, շունչս շնչիդ հետ, ես՝ քո, դու՛ իմ մեջ . . .

3

Ես սիրել եմ քեզ միշտ, սակայն այդ զգալի չէր կարող լինել ո՛չ քեզ և ո՛չ էլ ինձ համար, վասնզի դու ինձ չէիր տեսել, իսկ ես զբաղված էի քո արշալույսներին ու

վերջալույսներին ողջունելով: Քո պաղ ջրերը արբեցնում էին ինձ
երջանկությունով, ծաղիկները հեքիաթ էին հորիմում ինձ համար, իսկ
գագաթները կանչում էին վեր բարձրանալ, վեր գնալ . . . Միշտ վե՛ր . . .

4

Գիտեի՞ր, արդյոք, ո՞ւմ ես կյանք տալիս: Ես ուզում եմ քեզ համար գարդ լինել,
վասնզի իմ ամենաթանկագին գարդն ես դու, իմ հայրենի՛ք: Ես զգում եմ իմ
գորությունը, որ սնել ես դու և կմնամ գորավոր ամեն տեղ ու միշտ . . .

5

Տարիների ընթացքում դու զգացիր իմ այդ գորությունը . թախիծն էր գերել ինձ,
վիշտն էր կապել աչքերս, սիրտս քեզ էր սիրում, հոգիս խռովել էր քեզանից, իմ
հայրենի՛ք . դու էլ խռովեցիր ինձ հետ ու խսամբեցրիր ծաղիկներս, իմ այն
ծաղիկները, որ մի անգամ են ծաղկում . . .

6

Փախա քեզանից, լացիր դառնագին ու կանչեցիր ինձ, սակայն տառապանքն
ուժեղ էր քեզանից, իսկ ես անբաժան նրա հետ . . . Ես քեզ համար լալով լացի,
իմ հայրենի՛ք, ու սրտիս շարված կնճիռներին մեկի աչքը չէ հասել . կարոտդ
շղթայի պես կախվեց իմ թևերից ու դողանջում է անդադար ու ճնշում է
անդադար . . .

7

Շրջեցի մենակ, ուր որ գնացի, ցավդ տարա ինձ հետ, ստվերի նման ձգվեցի
վրադ, որ խորշակը չայրե քեզ: Ուզեցի միշտ կամար կապել ճակատիդ, արևից
ճաճանչներ խլել, լույս ու ջերմություն տալ քեզ, ուզեցի բախտ մուրալ քեզ
համար, որ ապրես ու ժպտաս, իմ հայրենի՛ք . . .

8

Ուր որ գնացի, տարա ես ինձ հետ խարույկը սիրույդ . ու ոչ մի աշուն չմարեց
նրան: Ես քեզ երգեցի աղոթքների տեղ, քեզ պաշտեցի աստվածների փոխարեն:
Դու ես աղբյուրն իմ գործության, իմ հայրենի՛ք . . .

Ես քեզ երգելով կերգեմ, իմ հայրենի՛ք: Ես քեզ սիրելով կարո՛ղ եմ ասել, իմ
հայրենի՛ք . . .

9

Թող բախտը փշե պսակ դնե քո գլխին, իմ հայրենի՛ք, ես վարդերով կգարդարեմ
այն: Թող բախտը խափանի մրմունջներիդ մեղեդին, ես հզոր կղողանջեմ այն,
չարի նահատա՛կ, իմ հայրենի՛ք . . .

1906 թ.